Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 37-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ----------էջ 3
2. Ամփոփագիր ----------էջ 5
3. Տվյալներ հաշվեքննվող օբյեկտի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ--էջ 6
4.Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ----------էջ 19
5.Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 19
6.Եզրակացություններ----------էջ 20
7. Առաջարկություններ ----------էջ 20

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 185-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	1. ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշում: 2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք: 3. ՀՀ կառավարության 28.03.2020 թվականի N 387-Ն որոշում: 4. ՀՀ կառավարության 30.03.2020 թվականի N 393-Ն որոշում: 5. ՀՀ կառավարության 01.04.2020 թվականի N 423-Ն որոշում: 6. ՀՀ կառավարության 01.04.2020 թվականի N 424-Ն որոշում: 7. ՀՀ կառավարության 02.04.2020 թվականի N 428-Ն որոշում: 8. ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշում: 9. ՀՀ կառավարության 06.04.2020 թվականի N 488-Ն որոշում: 10. ՀՀ կառավարության 23.06.2020 թվականի N 1032-Ն որոշում: 11. ՀՀ կառավարության 12.03.2020 թվականի N 296-Ա որոշում: 12. ՀՀ կառավարության 15.05.2018 թվականի N 706-Ն

որոշում:
13. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 274-Ն որոշում:
12. ՀՀ կառավարության 07.05.2020 թվականի N 715-Ն որոշում:
13. ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի N 1937-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել և վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշմամբ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանով ՀՀ վարչապետի աշխատակազմը կատարող է հանդիսացել 47 միջոցառման, ճշտված պլանով՝ 64 միջոցառման համար, որից ծախս է կատարվել միայն 48 միջոցառման շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածի (ինն ամիս) պլանը կազմել է 19,743,286.00 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 23,151,748.88 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 13,429,427.74 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 13,891,930.36 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 14,126,864.79 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 60.0%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված, սակայն չիրականացված թվով 12 միջոցառման համար հատկացված բյուջեն կազմել է 2,370,442.20 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում հաշվեքննությունն իրականացվել է ինը նշանակալի հաշվի շրջանակում՝ ընդամենը 8,228,130.67 հազ. դրամ փաստով (դրամարկղային ծախսով):

Հաշվեքննությամբ ընդգրկված «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից չի ապահովվել 15.05.2020 թվականին կնքված դրամաշնորհի հատկացման TPQI–ANIF–OP պայմանագրի 3.4 կետի պահանջի կատարումը՝ 2020 թվականի սեպտեմբերի 20-ի փոխարեն հարկային հաշիվը և հաշվետվությունը ներկայացվել են ուշացումով՝ սեպտեմբերի 22-ին:

«1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, նրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում «LALIVE» ընկերության կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ ներկայացված հանձնման-ընդունման NN 16 և 17 արձանագրություններում անգլերենով և հայերենով նկարագրված ծառայությունների միջև առկա են տարբերություններ:

Լևոն Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
23.02.2021 թ.

3. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանով ՀՀ վարչապետի աշխատակազմը հանդիսացել է 47, ճշտված պլանով՝ 64 միջոցառման կատարող, որից ծախս է կատարվել 48 միջոցառման շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածի (ինն ամիս) պլանը հաստատվել է 19,743,286.00 հազ. դրամի, ճշտված պլանը՝ 23,151,748.88 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը կազմել է 13,429,427.74 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 13,891,930.36 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 14,126,864.79 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 60.0%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված, սակայն չիրականացված թվով 12 միջոցառման համար հատկացված բյուջեն կազմել է 2,370,442.20 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել է ստորև բերված աղյուսակ 1-ով ներկայացված թվով ինը միջոցառում՝ ընդամենը 8,228,130.67 հազ. դրամ գումարով:

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված ծրագրերի, միջոցառումների և հոդվածների վերաբերյալ

Ծրագիր		Միջոցառում		Հոդված		Փաստ /հազ. դրամ/
1003	Հանրային առողջության պահպանում	11007	ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում	4266	-Առողջապա-հական և լաբորատոր նյութեր	1,129,409.30
1003	Հանրային առողջության պահպանում	31001	ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում	5122	- Վարչական սարքավորումներ	655,782.26
1018	Պետական հատվածի արդիականացման ծրագիր	32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների	5129	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,644,087.43

			ձեռքբերում			
1091	Հանրային իրազեկում	11001	Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ	4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	786,212.10
1136	ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,553,853.21
1136	ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	630,944.06
1213	Տեսչական վերահսկողության ծրագիր	11001	Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	517,525.70
1213	Տեսչական վերահսկողության ծրագիր	11007	Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	605,027.10
1223	Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում	11001	ՀՀ շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	Այլ ծախսեր	705,289.51
ԸՆԴԱՄԵՆԸ						8,228,130.67

ԾՐԱԳԻՐ՝ «1003 Հանրային առողջության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11007 ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 31001 «ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում»:

«1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է, կատարողը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով «11007 ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» միջոցառման «4266 Առողջապահական և լաբորատոր նյութեր» հոդվածով ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 1,229,506.20 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 1,129,506.20 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 1,129,409.30 հազարական դրամ:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի (դրամարկղային ծախսի) միջև տարբերությունը կազմել է 100,096.90 հազ. դրամ: Համաձայն «ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության, տվյալ տարբերությունն առաջացել է բժշկական պարագաների և հավաքածուների ձեռք բերման պահանջարկի բացակայության հետևանքով:

«31001 ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման «5122 Վարչական սարքավորումներ» հոդվածով ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 755,782.30 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 655,782.30 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 655,782.26 հազարական դրամ:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի (դրամարկղային ծախսի) միջև տարբերությունը կազմել է 100,000.04 հազ. դրամ: Համաձայն «ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության, տվյալ տարբերությունն առաջացել է սարքերի ձեռք բերման պահանջարկի բացակայության հետևանքով:

«1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի 11007 և 31001 միջոցառումների մասով հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով գումարները հատկացվել են համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, որոնցով (բացառությամբ ՀՀ կառավարության 23.06.2020 թվականի N 1032-Ն որոշման)

սահմանվել է, որ գնումներն իրականացվում, իսկ վճարումները կատարվում են հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 296-Ա որոշմամբ նախատեսված կարգով՝ հաշվի առնելով նաև, որ նախատեսված գործարքների նկատմամբ չեն կիրառվում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները: Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N296-Ա որոշման 2-րդ կետի՝ ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների շրջանակում գործարքները կարող են կատարվել առանց գրավոր պայմանագրերի կնքման՝ վճարումները կատարելով նաև հաշիվ-ապրանքագրի կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի հիման վրա, ինչպես նաև բացառիկ դեպքերում՝ առանց վերջիններիս առկայության:

2020 թվականի երրորդ եռամսյակում «1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի շրջանակում ծախսեր չեն իրականացվել, իսկ երեք և վեց ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները տեղադրվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում: Այդ պատճառով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացվել է միայն 11007 միջոցառման շրջանակում ձեռք բերված 67,965.00 հազ. դրամ ընդհանուր արժեքով 30 000 հատ արագ ախտորոշման թեստերի ՀՀ առողջապահության նախարարությանը հանձնելու վերաբերյալ 01.07.2020 թվականի հանձնման-ընդունման ակտ N 1-ը:

ԾՐԱԳԻՐ՝ «1018 Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

Միջոցառման 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով «5129 Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 3,427,972.10 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 118,000.00 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի միջոցներից), փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 1,644,087.43 հազարական դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է 47,96%:

Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրով հուլիս-սեպտեմբեր ամիսներին վճարումներ են իրականացվել թվով 5 պայմանագրերի շրջանակներում՝ ընդամենը 226,250.81 հազ. դրամ գումարով, այդ թվում՝

1. 2020 թվականի հուլիսի 24-ին կնքված թիվ PSMP-GO-2-2-19/1 պայմանագրի շրջանակում Յունիքոմփ ՓԲԸ-ի կողմից (մատակարար)՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի պատվերով (գնորդ), հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար մատակարարված սարքավորումների դիմաց 15.09.2020 թվականի հանձնման-ընդունման ակտի հիման վրա վճարվել է 24,056.86 հազ. դրամ: Համաձայն 2020

թվականի հուլիսի 20-ի ապրանքների ձեռքբերման գնահատման հաշվետվության՝ 29.06.2020 թվականին ARMEPS համակարգի միջոցով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար սարքավորումների ձեռք բերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ) գնահատված արժեքով: Մրցույթի հաղթող է ճանաչվել 24,070.40 հազ. դրամի գնառաջարկ ներկայացրած միակ հայտատուն՝ Յունիքոմփ ՓԲԸ-ն, որի հետ հետորակավորման արդյունքում 24.07.2020 թվականին կնքվել է պայմանագիր:

2. 2019 թվականի օգոստոսի 16-ի թիվ PSMP-GO-2-2-9/A-3 պայմանագրով ՀՀ ոստիկանության համար օպերատիվ կառավարման և պիլոտային համակարգերի ներդրման և պահանջվող սարքավորումների ձեռք բերման նպատակով «UOU Սիսթեմս» ՍՊԸ-ին 16.03.2020 և 21.07.2020 թվականին կնքված համապատասխան հանձնման-ընդունման ակտերի հիման վրա ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից վճարվել է 92,256.00 հազ. դրամ:

3. 2020 թվականի փետրվարի 17-ի թիվ PSMP3-GO-2-2-20/1 պայմանագրով ՍՈՎՌԱՆՈ ՍՊԸ-ի կողմից փոխվարչապետի գրասենյակի համար համակարգչային տեխնիկայի մատակարարման դիմաց՝ 25.09.2020 թվականին ՍՈՎՌԱՆՈ ՍՊԸ-ի և փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի միջև կնքված հանձնման-ընդունման ակտի հիման վրա, վճարվել է 14,201.03 հազ. դրամ, ընդ որում, ապրանքների մատակարարման դիմաց վճարման ենթակա գումարը կազմել է 14,365.20 հազ. դրամ, սակայն մատակարարման ուշացման համար հաշվարկվել է 164.17 հազ. դրամի չափով տույժ, որը հաշվանցվել է վճարման ժամանակ:

4. 2019 թվականի մարտի 25-ի Համակարգի փոխանցման և վերապատրաստման 4-րդ փուլով նախատեսված ծառայությունների գնման թիվ PSMP3-GO-2-2-12 պայմանագրով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ և Յունիքոմփ ՓԲԸ-ից կազմված համատեղ ձեռնարկության (կոնսորցիումի) կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին 27.05.2020 թվականին կնքված համապատասխան հանձնման-ընդունման ակտի հիման վրա վճարվել է 33,945.81 հազ. դրամ:

5. 2019 թվականի հունվարի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ ընկերության միջև կնքված թիվ PSMP3-GO-2-2-6/1 պայմանագրի շրջանակներում 5-րդ փուլով նախատեսված՝ մշակման, գործարկման և տվյալների փոխանցման ծառայությունների դիմաց, ընկերությանը վճարվել է 61,791.12 հազ. դրամ: Նշված ծառայությունները ընդունվել են ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից՝ 13.07.2020թ. հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

ԾՐԱԳԻՐ՝ «1091 Հանրային իրազեկում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ»

Միջոցառման 2020 թվականի ինն ամիսների պլանը «4637 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով հաստատվել է 507,914.90 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և փաստը (դրամարկղային ծախս) կազմել են 786,212.10 հազարական դրամ, փաստացի ծախսը՝ 749,043.82 հազ. դրամ:

Վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N 01 պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա համար դուրս է գրում հարկային հաշիվ: Աշխատակազմի կողմից ներկայացվել են 17.08.2020 թվականին դուրս գրված 60,562.7 հազ. դրամ, 14.09.2020 թվականին դուրս գրված 57,725.9 հազ. դրամ և 12.10.2020 թվականին դուրս գրված 62,234.4 հազ. դրամ գումարներով հարկային հաշիվներ:

14.10.2020 թվականին ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված 01.01.-30.09.2020 թվականի համար «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվության համաձայն՝ փաստացի ծախսը կազմել է 749,043.82 հազ. դրամ, որից 493,750.69 հազ. դրամը՝ դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարն է, իսկ 255,293.13 հազ. դրամը՝ նախորդ տարիների ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունների մարման ծախսերը:

ՊՈԱԿ-ը 15.10.2020 թվականի միջոցառումների կատարման հանձնման-ընդունման N 03 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ներկայացրել է պայմանագրի շրջանակներում կազմակերպության 08.01.-30.09.2020 թվականին իրականացված աշխատանքները, որոնց հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ առաջացած տարբերության պատճառները ներկայացվել են «ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների», հաշվետվությամբ:

ԾՐԱԳԻՐ՝ «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Ծառայությունների, ծրագրերի համակարգում»

ՀՈԴՎԱԾ՝ «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

4111 հոդվածով ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 1,763,678.10 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 1,675,180.20 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 1,553,853.21 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,707,857.76 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից տրամադրված "Client-Treasury" համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 4111 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ստորև բերված աղյուսակ 2-ում՝

Աղյուսակ 2

«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ

Վճարման նպատակը	Ընդամենը /հազ. դրամ/
Աշխատավարձ	834,488.47
Եկամտային հարկ	319,751.67
Սոցիալական վճար	27,857.46
Դրոշմանիշային վճար	2,917.00
Արձակուրդային վճար	190,542.91
Պարգևավճար	111,578.67
Վերջնահաշվարկ	33,328.11
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	28,687.23
Օգնություն	2,432.66
Թաղման նպաստ	2,016.61
Անդամավճար	1,951.09
ԴԱՀԿ	340.08
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,555,891.96**

"Client-Treasury" համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 1,555,891.96 հազ. դրամ գումարից 2,038.75 հազ. դրամը հաշվետու ժամանակահատվածում վերադարձված գումարների վերաձևակերպումներ են:

4111 հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով, դրամական միավորի ընտրանքի մեթոդի կիրառմամբ, ընտրված աշխատակիցների աշխատավարձի վերահաշվարկի արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

ԾՐԱԳԻՐ՝ «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»

ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքվել է 50.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գումարով «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային պայմանագիր, որը վերաձևակերպվել է 2020 թվականի հունվարի 10-ին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

1. Մաս “A” Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում

2. Մաս “B” Ներդրումների և արտահանման խթանում
3. Մաս “C” Որակի ազգային ենթակառուցվածքների արդիականացում
4. Մաս “D” Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 1,197,026.00 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 190,679.00 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի միջոցներից), փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 630,944.06 հազարական դրամ:

Նշված հոդվածով 2019 թվականին վճարումներ չեն կատարվել, իսկ 2020 թվականի ինն ամիսներին վճարվել է ընդամենը 1,302,985.91 ԱՄՆ դոլարին համարժեք 630,944.06 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 923,719.94 ԱՄՆ դոլարին համարժեք 447,271.46 հազ. դրամ, իսկ համաֆինանսավորման միջոցները՝ 379,265.97 ԱՄՆ դոլարին համարժեք 183,672.61 հազ. դրամ:

31.12.2019 թվականի դրությամբ ծրագրի վարկային հատուկ հաշվի մնացորդը կազմել է 2,482,382.21 ԱՄՆ դոլար, իսկ 30.09.2020 թվականի դրությամբ՝ 1,797,775.81 ԱՄՆ դոլար:

Թիվ 8390-AM վարկային պայմանագրով նախատեսվող աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքվել են դրամաշնորհի հատկացման համապատասխան պայմանագրեր:

1. «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի վճարումները կազմել են 315,185.10 հազ. դրամ, որից 223,523.29 հազ. դրամը վարկային, իսկ 91,661.81 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցները:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի միջև 2020թ. մայիսի 4-ին կնքված դրամաշնորհի հատկացման TPQI-EIF-OP պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված՝ պետական – մասնավոր գործընկերությունների և համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի փոխհատուցումն է: 2020 թվականի համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել են ծախսեր հետևյալ թվով 5 բաղադրիչներով՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի գործառնական ծախսեր, ինժեներական քաղաք բաղադրիչի գործառնական ծախսեր, նորարարության զարգացման համաֆինանսավորող դրամաշնորհներ, ազգային գերհամակարգչային կենտրոնի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր և

կիբեռ անվտանգության ինկուբատորի և հետազոտությունների և մշակումների (R&D) լաբորատորիայի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր:

Գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով վերոնշյալ բաղադրիչներով ծախսերը նախատեսվել են 1,257,615.15 հազ. դրամի չափով, որից 945,572.80 հազ. դրամը վարկային, իսկ 312,042.35 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: 2020 թվականի երրորդ եռամսյակում «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ին վճարվել է ընդամենը 123,413.56 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 84,602.94 հազ. դրամ, իսկ համաֆինանսավորումը՝ 38,810.61 հազ. դրամ:

Ուսումնասիրությամբ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի կողմից սահմանված ժամկետներում հարկային հաշիվ, նախորդ ամսվա ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման, իսկ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից՝ վճարումների մասով պայմանագրային պարտավորությունների չկատարման փաստեր չեն արձանագրվել:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին 2020 թվականի ինն ամիսներին վճարվել է ընդամենը 11,436.21 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 7,704.6 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 3,731.5 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև 15.05.2020 թվականին կնքված դրամաշնորհի հատկացման TPQI–ANIF–OP պայմանագրի առարկան ներդրողներին և արտահանողներին ուղղված հետևյալ առանցքային ծառայությունների մատուցումն է՝

- մարքետինգի և խթանման աշխատանքներ իրականացնելու նպատակով արտահանման և ներդրումների առանցքային օտարերկրյա շուկաներում հայկական ներկայացուցչությունների ստեղծման ծախսերի ֆինանսավորում,
- արտահանման մի շարք ծրագրերի և շուկայի հետազոտության ծառայությունների ծախսերի ֆինանսավորում,
- իմիջի ձևավորման և ներդրումային իրազեկման ծառայությունների իրականացում,
- ՆԱԽԱՁԳ-ի համար տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ստեղծում,
- ուսուցման և կարողությունների զարգացման աշխատանքների իրականացում,
- միջազգային փորձագետների վարձում:

2020 թվականի «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել են ծախսեր հետևյալ բաղադրիչներով՝ գործառնական ծախսեր, ներկայացուցչություններ (Մոսկվա, Փարիզ, Աբու Դաբի), խորհրդատվական ծառայություններ և սարքավորումների գնում, հաղորդակցման և PR կապերի իրականացում: Վերոնշյալ բաղադրիչներով նախահաշվով նախատեսվել են ընդամենը

1,227,231.60 հազ. դրամի ծախսեր, որից վարկային միջոցները կազմել են 961,780.00 հազ. դրամ, իսկ համաֆինանսավորումը՝ 265,451.60 հազ. դրամ:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2020 թվականի երրորդ եռամսյակում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին վճարվել է 154,402.36 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 102,257,62 հազ. դրամ, իսկ համաֆինանսավորումը՝ 52,144,76 հազ. դրամ:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին 2020 թվականի ինն ամիսներին վճարվել է ընդամենը 304,322.75 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 216,043.51 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 88,279.24 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջև 15.05.2020 թվականին կնքվել է դրամաշնորհի հատկացման TPQI-ANIF-OP պայամանագիր, որի առարկան կազմակերպության գործառնական ծախսերի ֆինանսավորումն է:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020 թվականի համար գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով ներկայացրել է ծախսեր հետևյալ թվով 4 բաղադրիչներով՝ անձնակազմի վարձատրություն, գործուղման ծախսեր, ծառայություններ և գրասենյակային ծախսեր ընդամենը 29,252.00 հազ. դրամի չափով, որից վարկային միջոցները կազմել են 20,800.45 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 8,451.55 հազ. դրամ:

2020 թվականի երրորդ եռամսյակում գործուղման ծախսեր և ծառայություններ բաղադրիչներով ծախսեր չեն կատարվել, իսկ մնացած երկու բաղադրիչներով վճարվել է ընդամենը 5,509.85 հազ. դրամ, որից վարկային միջոցները կազմել են 3,470.33 հազ. դրամ, համաֆինանսավորումը՝ 2,039.52 հազ. դրամ:

Ուսումնասիրությամբ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից սահմանված ժամկետներում հարկային հաշիվ, նախորդ ամսվա ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման, իսկ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից՝ վճարումների մասով պայմանագրային պարտավորությունների չկատարման փաստեր չեն արձանագրվել:

ԾՐԱԳԻՐ՝ «1213 Տեսչական վերահսկողության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ»

ՀՈԴՎԱԾ՝ «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

Տվյալ հոդվածով 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանը, ֆինանսավորումը և փաստը կազմել են 517,525.70 հազարական դրամ, փաստացի ծախսը՝ 594,239.15 հազ. դրամ: Կատարված ծախսերի արժանահավատության

գնահատման նպատակով կիրառվել է դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ընտրանքով ընդգրկված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

ԾՐԱԳԻՐ՝ «1213 Տեսչական վերահսկողության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11007 Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ»

ՀՈԴՎԱԾ՝ «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

Տվյալ հոդվածով 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 629,805.30 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 612,021.70 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 605,027.10 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 660,496.35 հազ. դրամ: Կատարված ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով կիրառվել է դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ընտրանքով ընդգրկված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

ԾՐԱԳԻՐ՝ «1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, նրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»:

Տվյալ միջոցառման «4861 Այլ ծախսեր» հոդվածով 2020 թվականի ինն ամիսներին ճշտված պլանով նախատեսվել է 1,180,734.36 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 705,289.56 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 705,289.51 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 754,229.51 հազ. դրամ:

Միջոցառումը հիմնականում իրականացվել է «Baker & Mc Kenzie LLP» և «LALIVE» ընկերության կողմից՝ այդ նպատակով ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա: 2020 թվականի ինն ամիսներին մատուցված ծառայությունների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություններով կատարվել են վճարումներ, որոնք ներկայացվել են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

2020 թվականի ինն ամիսներին «Baker & Mc Kenzie LLP» և «LALIVE» ընկերությանը կատարված վճարումների վերաբերյալ

N	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվը	Վճարման նպատակը	Հազ. դրամ	Հազ.ԱՄՆ դոլար
1	Baker & McKenzie LLP ընկերություն	01.06.2020	Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնում	128,283. 8	262. 500

2.	Baker & McKenzie LLP ընկերություն	31.07.2020	(Արբիտրաժային դատարանում) ՀՀ շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	67,375.0	137.500
3.	Baker & McKenzie LLP ընկերություն	13.08.2020		69,835.2	142.550
4.	LALIVE ընկերություն	15.04.2020	«Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվ. տեխնոլոգիաների նախարարության դեմ հարուցված վարույթում ՀՀ շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	285,636.49	582.46
5.	LALIVE ընկերություն	18.06.2020		41,392.45	85.33
6.	LALIVE ընկերություն	25.08.2020		71,505.77	145.90
Ընդամենը				664,028. 71	877.79

Բացի վերոնշյալ ընկերություններից, միջոցառման իրականացմանը մասնակցել է նաև FOLEY HOAG LLP ընկերությունը, որին 2020 թվականի ինն ամիսների ընթացքում վճարվել է 41,260.8 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրվել են որոշ հարցեր՝ կապված ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման, կնքված համաձայնագրով սահմանված ծառայությունների ոլորտին չառնչվող ծառայությունների ձեռք բերման հետ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ոչ ռեզիդենտ հանդիսացող «LALIVE» ընկերության հետ կնքված պայմանագրին կից փաստաթղթերում առկա է Շվեյցարիայի վերահսկիչ հարկային ծառայության կողմից տրված վկայական: Միաժամանակ՝ նշվածի վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցի պատասխան գրությունը, համաձայն որի ռեզիդենտության տեղեկանքը հիմք է հանդիսանում Շվեյցարիայի ռեզիդենտ հանդիսացող կազմակերպության կողմից իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտները ՀՀ-ում չհարկելու համար, եթե ոչ ռեզիդենտն այդ գործունեությունը չի իրականացնում կոնվենցիայի իմաստով ՀՀ-ում գտնվող մշտական հաստատության միջոցով:

Միաժամանակ պարզվել է, որ 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզակացությունում պարունակվող հարցը՝ կնքված համաձայնագրով սահմանված ծառայությունների ոլորտին չառնչվող ծառայությունների ձեռք բերման մասին, կարգավորված է պայմանագրի 4.3 կետով՝ ըստ որի պատվիրատուի ցուցումներով պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրում չներառված հետագա փաստաբանական և իրավաբանական

ծառայություններ իրականացնելու դեպքում կատարողի հաշիվ-ապրանքագրի հիման վրա մատուցված լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է:

4.ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի կատարման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև 15.05.2020 թվականին կնքված դրամաշնորհի հատկացման TPQI–ANIF–OP պայմանագրի 3.4 կետի պահանջի կատարման հետ: Համաձայն պայմանագրի 3.4 կետի՝ 2020 թվականի սեպտեմբեր ամսին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ, ներկայացվելու է փաստացի կատարված ծախսերի մասով Ակտ և դրա հիման վրա դուրս գրվող հարկային հաշիվ, մինչդեռ սեպտեմբեր ամսին հարկային հաշիվը և հաշվետվությունը ներայացվել են ուշացումով՝ սեպտեմբերի 22-ին:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. «1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, նրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում «LALIVE» ընկերության կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ ներկայացված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունների 16 և 17-ում տեխնիկական «բնութագրի համառոտ շարադրանք» սյունյակներում անգլերենով և հայերենով նկարագրված ծառայությունների միջև առկա են տարբերություններ:

2. Նույն միջոցառման շրջանակում ՀՀ արդարադատության նախարարության և «Baker & Mc Kenzie LLP» ընկերության միջև 18.12.2018 թվականին կնքված ARB/18/28-2 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ 2020 թվականի 3-րդ եռամսյակում կնքված N 2 համաձայնագրի 3.1 կետով սահմանվել է, որ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրող Կողմերից վերջինի կողմից ստորագրման օրվանից՝ 29.07.2020 թվականից, սակայն համաձայնագրով վճարման ժամանակացույցին հետադարձ ուժով տրվել է 2020 թվականի մայիսի 31-ից ծագած իրավահարաբերությունների վրա տարածվելու հնարավորություն:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից չի պահպանվել 15.05.2020 թվականին կնքված դրամաշնորհի հատկացման TPQI–ANIF–OP պայմանագրի հարկային հաշվի և հաշվետվության ներկայացման ժամկետին վերաբերող 3.4 կետի պահանջի կատարումը:
2. Պատշաճ ուշադրություն չի հատկացվել «LALIVE» ընկերության կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների բովանդակությանը՝ հանգեցնելով հայերենով և անգլերենով նկարագրված նույն ծառայությունների միջև առաջացած տարբերություններին:
3. Բավարար չափով չի հիմնավորվել «Baker & Mc Kenzie LLP» ընկերության հետ փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրում համաձայնագրով վճարման ժամանակացույցը նախորդ ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների վրա տարածելուն նվիրված փոփոխությունների անհրաժեշտությունը:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմին

1. Հետևել պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված պարտավորությունների ժամանակին կատարմանը:
2. Հետևել կազմակերպությունների կողմից ներկայացվող՝ մատուցված ծառայությունների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունների բովանդակությանը:
3. Ապահովել տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերում կատարվող փոփոխությունների հիմնավորվածությունը:

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն, առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):